ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կապուտան, (098) 42-88-38, (077) 67-08-01, kaputan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017Թ. N 41

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Վանիկ Նահապետի Հակոբյանի /ծնվ. 1933թվականին/ դիմումը, որով ցանկություն է հայտնել վերականգնել սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզ գյուղ Կապուտան 9-րդ փողոց թիվ 5 հասցեում գտնվող բնակելի շինության սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքի հիմքերը:

Կատարված ուսումնասիրությունից պարզվել է,որ Աբովյանի շրջանի ժողդատարանի 1978 թվականի հունվարի 25-ին կայացած վճռի համաձայն՝ քաղաքացի Վ.Հակոբյանին ճանաչել են Կապուտան գյուղի 9-րդ փողոց թիվ 5 հասցեի շինության սեփականատեր:

Բնակելի շինության փաստացի օգտագործման տարածքը կազմում է 0,03409հա, որը արտացոլված է համայնքի կադաստրային քարտեզում:

Ղեկավարվելով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և քաղ. Վ. Հակոբյանի դիմումը.

. ***որոշում եմ,***

1. Քանի որ, Վ.Հակոբյանի կողմից կառուցված շինությունները կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ,համարել այն Վ.Հակոբյանի սեփականություն:
2. Քանի որ հողատարածքը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում,ապա այն հատկացնել սեփականության իրավունքով:
3. Ոժը կորցրած համարել համայնքի ղեկավարի 13. 09. 2017թվականի թիվ 40 որոշումը:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղար Ա.Մուրադյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կապուտան, (098) 42-88-38, (077) 67-08-01, kaputan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 42

2017Թ.ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՊՈՒՏԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կապուտան համայնքում ստեղծել մեկ ընտրատեղամաս, որը գտնվում է Կապուտանի միջնակարգ դպրոցի շենքում՝ 8-րդ փողոց թիվ 11 հասցեում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

20 17թ. Սեպտեմբեր 20
գ.Կապուտան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կապուտան, (098) 42-88-38, (077) 67-08-01, kaputan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 43

2017Թ.ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով ,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կապուտան համայնքում սահմանել մեկ տեղամասային կենտրոն, որը գտնվում է Կապուտանի միջնակարգ դպրոցի շենքում՝ 8-րդ փողոց թիվ 11 հասցեում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԵՐՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

20 17 թ.Սեպտեմբեր 20